Մարտի 6-ին իրականացվելիք միջոցառումների հմառոտ նկարագիր

Ուղարկող Arshak Poghosyan <arshak.poghosyan@teachforarmenia.org>
Ստացող <info@vsu.am>
Ամսաթիվ 26.02.2026 17:00

Screenshot 2026-02-24 at 14.31.19.png (~220 ԿԲ)

Հարգելի՛ ՎՊՀ-ի գործընկերներ, ողջունում եմ ջերմորեն:
Ինչպես քիչ առաջ Ռեկտորի հետ զրույցում պայմանավորվեցինք, այս նամակով տրամադրում եմ տեղեկություն մեր առաջիկա անելիքների վերաբերյալ, որը, կարծում եմ, կարող է հետաքրիր լինել ուսանողության շրջանում:

Ինչպես նախորդիվ, այս տարի ևս նախաձեռնել ենք կինոդիտումների շարք ՀՀ մարզային քաղաքներում՝ մասնավորապես Գյումրի, Վանաձոր և Կապան:
Ունենք Հիմնադրամի մասին նկարահանված վավերագրական կարճամետրաժ ֆիլմաշար Հ1-ի հետ համատեղ, որում պատմում ենք մեր ուսուցիչների կյանքի, փորձառության մասին:
Նախատեսում ենք Վանաձորում ցուցադրել Արսինե Ամիրյանի պատմությունը, ով դասավանդել է Ախուրյան համայնքում պատմություն առարկան:
Կինոդիտումը «Կինոլոռի» կինոթատրոնում է, մարտի 6-ի երեկոյան, 18.30, մուտքը ազատ:
Նախքան միջոցառումը, նախատեսում ենք նաև հոկտեմբերի 6-ին այցելել մեր համագործակից բուհեր՝ այս սեզոնում վերջին անգամ ներկայացնելու մեր առաջարկները, քանի որ ապրիլին հայտերը կփակվեն:

Հաշվի առնելով վերոգրյալը և Ռեկտորի կողմից բանավոր համաձայնությունը, խնդրում եմ Ձեր աջակցությունը ՎՊՀ-ում հնարավոր պրեզենտացիա իրականացնելու հարցում մարտի 6-ին ժամը 14.30-15.00 սկսկած: Խնդրում ենք ներգրավել հիմնական առարկաների գծով ապագա մասնագետներին՝ ներկայիս ավարտականներին: Հաշվի առնելով այն փաստը, որ ավարտական ուսանողներ հնարավոր է չլինեն համալսարանում, կարող ենք պրեզենտաիցային ներգրավել նաև 3-րդ կուրսերին, քանի որ մի քանի ամսից նրանց համար ունենալու ենք առաջարկներ գալիք տարվա համար՝ կրթաթոշակային և բուն ծրագրային:

Ինչ վերաբերում է ֆիլմադիտմանը, այս հարցով ևս խնդրում եմ աջակցություն հնարավոր հետաքրքրված անձանց շրջանում միջոցառման մասին ինֆոյի տարածման հարցում, հաշվի առնելով, որ կլինեն ուսանողներ, որոնց օրը և ժամը հարմար կլինի և կցանկանան փորձի փոխանակում ունենալ ինձ հետ, մեր ներկայացուցիչների հետ:
Տեքստը և նկարը, որով կարող եք տարածել ինֆորմացիան, տեղադրում եմ ստորև:

Կանխավ շնորհակալ եմ:

Հրավերի տեքստ

«Դասավանդի՛ր հանուն Հայաստանի» հիմնադրամը Վանաձորի պետական համալսարանի ուսանողներին հրավիրում է մասնակցելու ՄիաSeen Լոռի ֆիլմադիտման:

Ֆիլմը ներկայացնում է Հիմնադրամի գործունեությունը, ներկայումս առաջարկվող հնարավորությունները և Ուսուցչական առաջնորդության ծրագիրը՝ իրական կերպարների մասնակցությամբ:

Միջոցառման ընթացքում նախատեսվում է ֆիլմի դիտում, բաց ու անկեղծ քննարկում և հյուրասիրություն:

🤩 **Մուտքն ազատ է**, սակայն տեղերը սահմանափակ են:
Խնդրում ենք **նախապես գրանցվել** , որից հետո մասնակիցները կստանան հրավեր նամակ. օրերս նաև կտրամադրենք հրավիրատոմսեր:

Գրանցման հղում՝ https://www.tfaforms.com/5212652

Արշակ Պողոսյան
Համալսարանական համագործակցության
և ուսանողների ներգրավման ղեկավար

ԴԱՍԱՎԱՆԴԻՐ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ

✊ Միացիր մեր շարժմանը:

📞 **+374 41 530237**

Email tracked with Mailsuite · Opt out

Screenshot 2026-02-24 at 14.31.19.png ~220 ԿԲ